«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարտիրոսյան Անի Գագիկի

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արարատի մարզի ք.Արտաշատի 4 հիմն.դպրոց

Արտաշատ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

Հետազոտության նպատակը……..……..……..3

Հետազոտության խնդիրը.....3

Հետազոտության թեմայի արդիականությունը……..4

2. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ……..... 5

2.1 Դպրոց-ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության վրա……...5

2.2 Ի՞նչ է նշանակում ծնողների ներգրավվածություն……9

2.3 Ծնողական ժողովների անցկացումն ու դրանց նպատակը……10

2.4 Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա……13

3.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 16

4.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչն այն մարդն է, ով դժվար բաները դարձնում է հեշտ:

Ռալֆ Էմերսոն

Ամենամեծ գովեստն ուսուցչի համար այն է, երբ գովում են իր աշակերտին:

Շառլոտ Բրոնտե

Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝ նա ձևավորում է մարդուն:

Մ. Կալինին

Նպատակը եւ հետազոտական հարցը / Հետազոտության խնդիրը

Հետազոտության համար որպես խնդիր եմ սահմանել ծնող-ուսուցիչ համագործակցության՝ կրթության որակի վրա ունեցող բացառապես դրական ազդեցության կարևորումը:

- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին դպրոցներում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման պրոցեսին:
- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին:

Հետազոտության նպատակը

Սույն հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է մատնանշել բոլոր այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան ամրապնդել դպրոց-ծնող համագործակցությունը՝ նպատակ ունենալով նպաստել սովորողի ուսումնառության որակի բարձրացմանը:

- Կապ ստեղծել դպրոցի և սովորողի ծնողի միջև :
- Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ,

ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:

- Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար:
- Ցույց տալ ծնող-ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

Թեմայի կարևորությունը եւ նշանակությունը

Սույն հետազոտության կարևորությունը հանդիսանում սովորողի կրթության ու դաստիարակության իրավունքը և այդ իրավունքի իրացման ճանապարհին ծնող-ուսուցիչ առողջ համագործակցային հարաբերությունների հաստատումն այն համատեքստում, որ երկու կողմն էլ շահագրգիռ են, որ այդ իրավունքի իրացման գործընթացը լինի արգասաբեր, հաջողություններով ու հաղթանակներով լի:

Հետազոտության արդիականությունը պայմանավորել եմ սովորողի ծնողի և ուսուցչի միջև կառուցողական հարաբերությունների անհրաժեշտությամբ, ինչը, կարծում եմ, իր դրական ազդեցությունն է բերում կրթադաստիարակչական գործընթացի անցնցում իրականացման վրա:

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2.1 Դպրոց-ծնող համագործակցության դերը սովորողի կրթության ու դաստիարակության վրա

Ուսուցչի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը, ինչն իրականացվում է ուսումնական գործընթացի ընթացքում: Ուսուցչի գերխնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Մի չնչին բացթողումը, մեթոդի կամ հնարի սխալ ընտրությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սովորողի հոգեկերտվածքի, ընկալումների, առհասարակ բնականոն զարգացման վրա, ուստի այս պարագայում շատ է կարևորվում ծնող-ուսուցիչ կապը: Առողջ համագործակցության արդյունքում, անշուշտ, հնարավոր է անցնցում անցնել ուսումնական բոլոր մակարդակները ու բազում հմտություններով, նոր գիտելիքներով մտնել կյանքի հաջորդ շրջափուլ:

Այժմ, երբ երեխայի հետ փոխգործակցության օպտիմալ մոդելը ուղղված է անձին, ուսումնական հաստատությունում կրթական ծրագրերը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով սովորողի անհատականությանը: Իսկ ինչպես հայտնի է անհատականությունը ձևավորվում է ընտանիքում, քանի որ երեխան իր ժամանակի մեծ մասն անցկացնում է ընտանիքում և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը: Շատ հաճախ կարելի է կարծիք լսել, որ ամեն ինչ ընտանիքից է գալիս: Սա իսկապես այդպես է: Հիմնական բնավորության գծերը կա՛մ գենետիկորեն դրված են, կա՛մ ձևավորվում են ծնողների ազդեցության տակ մանկության տարիներին: Բայց դա չի նվազեցնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում: Հասարակության կողմից կրթական համակարգին ներկայացվող պետական պատվերը՝ ֆիզիկապես և հոգեբանորեն առողջ սերնդի ձևավորումն է, որի իրականացնողը հենց ուսուցիչն է: Այն սերմերը, որոնք ցանվել են ծնողների կողմից, կարող են հավասարապես սատկել կամ բողբոջել դպրոցական միջավայրում՝ դասարանի թիմի ,ուսուցիչների և դասղեկի ազդեցության տակ: Այդ իսկ պատճառով պետք է իրականացնել

համագործակցություն ուսուցչի, սովորողի ընտանիքի հետ: Եվ այդ համագործակցությունը գնալով դառնում է ավելի արդիական և պահանջված: Մի չնչին բացթողումը, մեթոդի կամ հնարի սխալ ընտրությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սովորողի հոգեկերտվածքի, ընկալումների, առհասարակ բնականոն զարգացման վրա, ուստի այս պարագայում շատ է կարևորվում ծնող-ուսուցիչ կապը:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը իրենից ներկայացնում է նպատակաուղղված և երկարատև աշխատանք, որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը: Ուսուցչի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի ՝ հաշվի առնելով բարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել կյանքի՝ մարտահրավերներով լի ժամամանակակից շրաջափուլում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնողուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը, որն ունակ է մեծապես ազդել սովորողի ուսումնառության որակի բարձրացման վրա:

Սովորողը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը և ուսուցիչը ուսումնական գործընթացի մասնակից են համարվում: Ուսուցիչը ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու իրականացնողն է, ով մեծագույն պատասխանատվություն է կրում սովորողի չափորոշչային վերջնարդյունքներին հասնելու համար: Ծնող- ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը , ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը: 6 Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր: Ծնող-ուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է

ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա:

Ընտանիքին յուրաքանչյուր երեխայի կրթության իմաստալից մասը դարձնելու համար ուսուցիչը պետք է՝ ծնողներին և ընտանիքներին դիտի որպես գործընկերներ, կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ, հրավիրի ընտանիքներին իրենց մասնակցությունը բերելու ծրագրին, ընդլայնի աջակցությունը ընտանիքներին՝ տնային պայմաններում ուսմանը նպաստելու նպատակով, աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում:/ «Քայլ առ քայլ» -ի չափորոշիչների կիրառումը դասարաններում/ Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում, կլինի կառավարելի և որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառացած խնդիրները: Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակներում:

Սովորողի բնականոն զարգացման ու դաստիարակության գաղափարն է միավորում ծնողներին և ուսուցիչներին, ուստի համագործակցությունը պետք է ուղղված լինի հենց այդ գաղափարի բնականոն ու արդյունավետ իրականացմանը: Ծնողների ներգրավվածությունը սովորողի դպրոցական կյանքին ոգևորիչ է նաև ուսուցչի համար, քանի որ դժվարությունների առաջացման ժամանակ, վերջինս կարող է հույս դնել ծնողական օգնության վրա:

Ծնողների ներգրավվածությունը երեխայի դպրոցական կյանքին և ուսումնական գործընթացին իր մեջ ներառում է.

· դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն,

· երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում,

· դպրոցի համար խելամիտ ու հիմնավոր պահանջների նախանշում,

· ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և սովորողների առաջընթացի ու վարքային դրսևորումների քննարկում,

· տնային առաջադրանք կատարելիս սովորողին օգնության ցուցաբերում և ուղղորդում,

· ծնողական ժողովներին ակտիվ մասնակցություն

· գործունեություն ծնողական խորհրդում,

· այլ ծնողների հետ քաղաքավարի շփում, համագործակցություն:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկարատև ու բարդ գործընթաց է, որի հիմքում պետք է դրված լինեն մի շարք սկզբունքներ, որոնց թվում են.

• Փոխադարձ հարգանքը ծնող-ուսուցիչ հարաբերություններում;

• Առողջ բարոյահոգեբանական միջավայրը;

• Ընդհանուր շահի շուրջ բանակցելու, ելքեր գտնելու կարողությունը;

• Արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմների գործարկումը;

• Մշտադիտարկումը;

• Սխալների ընդունումը, վերլուծություն, թերի կողմերի արձանագրումը;

• Ինքնանդրադարձ կատարելու կարողությունը;

• Հումանիստական մղումները;

• Սեփական շահի ստորադասումը;

• Անձնային բարձր որակների դրսևորումը:

2.2 Ի՞նչ է նշանակում ծնողների ներգրավվածություն

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»: «Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

- Ծնողները կարևոր դեր են խաղում որդու ուսման գործընթացում.
- Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.
- Ծնողները զավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը «Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել.
- Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.
- Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.

• Դպրոցի համար ռեալ պահանջների նախանշում.

• Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում.

• Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում.

• Տնօրենների և ուսուցիչների համար ծնողի ներգրավումը դպրոցական կյանքում նշանակում է.

• Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում.

• Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին.
• Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով.

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

2.3 Ծնողական ժողովների անցկացումն ու դրանց նպատակը

Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: Ցանկացած ժողովի համար անհրաժեշտ է նախապատրաստել ծնողներին

տրվող հարցեր։ Օրինակ, ուսումնական տարվա սկզբին կարելի է պատրաստել այսպիսի հարցաթերթիկ.

ՀԱՐՑԱԹԵՐԹ

1. Հաճույքո՞վ է Ձեր երեխան գալիս դպրոց։

2. Որո՞նք են Ձեր երեխայի հիմնական մարդկային առավելությունները, նրա լավագույն գծերը և ունակությունները։

3. Որո՞նք են Ձեր երեխայի թերությունները, թուլությունները։

4. Ո՞ր առարկաներն է նա հետաքրքրությամբ ուսումնասիրում։

5. Ո՞ր առարկաները չի սիրում, անտեսում է։

6.Հասցնում եք ամեն օր ստուգել պատրաստվել է դասերին , կատարել է տնային առաջադրանքները։

7. Ձեր երեխան ունի՞ մշտական տնային պարտականություններ։ Որո՞նք են նրա տնային պարտականությունները։

Ծնողական ժողովների ժամանակ ուսուցիչը պետք է ունենա հստակ սահմանված օրակարգ, որի համաձայն պետք է անցկացնի այն։ Ժողովն անցկացնելիս ուսուցիչը պետք է նկատի ունենա հետևյալ սկզբունքները. Ժողովը սկսեք բարձր տրամադրությամբ և ողջույնի խոսքով։

· Ծնողներին ներկայացրեք ժողովի օրակարգը։

· Խոսեք նախ դրական հարցերի մասին։

· Առանձին աշակերտների խնդիրները մի դարձրեք ընհանուր քննարկման թեմա։

· Աշակերտների բացասական կողմերը ներկայացնելիս եղեք նրբանկատ։

· Օրակարգի յուրաքանչյուր հարց քննարկելուց հետո անպայման լսեք ծնողների առաջարկությունները։

· Կատարեք ծնողների հաշվառում։

· Հետևեք ժամանակին. ժողովը չպետք է տևի մեկուկես ժամից ավելի:

· Ժողովն ավարտեք որևէ հետաքրքիր և ուրախալի տեղեկության հաղորդմամբ.

· հիշեք՝ յուրաքանչյուր ծնող ժողովից պետք է հեռանա լավ տրամադրությամբ, հաջորդ ժողովին անպայման մասնակցելու մեծագույն ցանկությամբ :

Հետազոտությունները ցույց են տվել, որ սովորողները ավելի լավ են դպրոցում, երբ նրանց ծնողը կամ խնամակալը ներգրավված է ուսումնական գործընթացին: Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում է սոցիալական շատ կարևոր հմտություններ և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք շատ կարևոր գործոններ են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Ծնողները տեղեկացված են լինում իրենց երեխաների կրթական կարիքների մասին և խրախուսում են ներգրավվելը: http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

Օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները /համակարգիչ, հեռախոս/ կարելի է ծնողների հետ քննարկումները կատարել հեռավար: Տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս երեխայի կրթական կարիքների և ուսման առաջադիամության կամ կարգապահական խնդիրների մասին տեղեկանալ ավելի շուտ: Ուսուցիչն օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները կարող է աշակերտի առաջընթացի մասին հաշվետվություն ուղարկել տուն՝ շաբաթական կամ ամսական մի քանի անգամ:

Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված: Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին , կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ: /Կ. Դ. Ուշինսկի/

Այսպիսով, կարող ենք վերահաստատել այն պնդումը, որ ուսուցչի համագործակցումը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողի կրթության կազմակերպման ու դաստիարակության մեջ ունի առանցքային նշանակություն:

2.4 Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա

Ընտանիքը, որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա շատ կարևոր են երեխայի բնականոն զարգացման համար: Սա այն միջավայրն է, որտեղ ծնվում ու աշխարհաճանաչողության սկզբնական քայլերն է անում մանուկը, դեռահասը, ուստի ծնողի, ընտանեկան միջավայրի ուղիղ ներգործությունը ողջ կյանքի վրա ունենում է մեծ ազդեցություն: Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Կարևոր հանգամանք է երեխայի կարգավիճակը ընտանիքում: Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիք-դպրոց համագործակցության ակունքում: Այս մասով իր կարևոր դերակատարում ունի ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժը: Սոցիալական մանկավարժը, համագործակցելով բազմամասնագիտական խմբի մյուս մասնագետների հետ, ուսումնասիրում է սովորողների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը սովորողի վրա, նրանց սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները, սոցիալական միջավայրում հարմարման և պաշտպանվածության մակարդակը, դուրս է բերում կարիքները և դրանց համապատասխան կազմում է միջամտության պլան, որը ներառում է կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները, ժամկետները: Որպեսզի դաստիարակչական գործընթացն ընտանիքում անցնի արդյունավետ, հարկավոր է, որ ծնողներն առաջին հերթին բացառեն որևէ բռնություն, վատ կամ բացասական ներգործություն երեխայի վրա:

Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակությունը: Կարգապահության լավագույն դպրոցը հենց ընտանիքն է, որի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է: Իսկ երեխաների դաստիարակության գլխավոր դպրոցը ծնողների փոխհարաբերություններն ու վերաբերմունքն է միմյանց նկատմամբ: Ուստի, ընտանեկան դաստիարակության շատ դժբախտությունների արմատները թաղված են հենց այնտեղ, ուր ծնողները երեխային մանկությունից չեն սովորեցրել ղեկավարել սեփական ցանկությունները, չեն սովորեցրել ճիշտ վերաբերվել մեծերին: Առանց ընտանեկան ճիշտ դաստիարակության դպրոցում սովորողին կառավարելն ու վերահսկելը անչափ դժվար է ուսուցչի համար: Այն ծնողներն են շահում, ովքեր երեխաների դաստիարակությունն իրականացնելիս ամեն ինչի չափը դարձնում են սովորույթ, բնավորության գիծ, ամենօրյա կանոն, ու դրանցով այնպես են առաջնորդվում, ինչպես օրենքը հարգող դատավորը: Ծնողները դասղեկի, ուսուցիչների անմիջական օգնությամբ պարտավոր են սիրո զգացմունքներ դաստիարակել :

Ծնողը պիտի ընկեր լինի իր երեխայի համար, հաճախակի զրուցի նրա հետ կյանքից, բարուց ու չարից, լավ ու վատից, հասարկությունից, արժեքներից, հայրենիքից, ծնողից, տնից, հազար ու մի կարևոր մանրուքներից: Այս բոլորն էլ ի վերջո կկազմեն այն դաստիարակությունը, այն արժեքային համակարգը, որ ծնողը կփոխանցի իր երեխային: Հաճախ ենք տրտունջներ լսում դասարանում սովորողների վարքից, կարգապահությունից: Իսկ ի՞նչ ակնկալիք կարելի է ունենալ նման սովորողներից, ովքեր դասերին հաճախում է հենց այնպես, առանց ուշադրության, առանց պատասխանատվության տարրական զգացումի, անտարբեր են դասարանի մաքրության, աշխատանքային սեղանի կոկիկության, գեղեցիկ ձեռագրի և այլ նմանատիպ կարևոր մանրուքների նկատմամբ: Ի՞նչ ակնկալել այն աշակերտից, որ դպրոց է գալիս զուտ ընկերներին տեսնելու, նրանց հետ չարաճճիություններ անելու և ուրախ ժամանակ անցկացնելու համար: Նման աշակերտին կարելի է փրկել միայն ճիշտ ու կանոնավոր դաստիարակությամբ, իսկ այստեղ կրկին կցանկանանք կարևորել ծնող-դպրոց կապը: Այսպիսով, կարծում ենք, որ որևէ կերպ չի կարելի անտեսել ծնողին: Եթե վերջինս չի պատկերացնում սեփական երեխայի ուսումնական

հարցերում իր կարևոր դերակատարումը, ապա հարկավոր է, որ ուսուցիչը սկսի հենց այդ կետից՝ ծնողին բերել համագործակցային դաշտ: Ուսումնասիրելով սույն հետազոտության թեման՝ ձեռք բերեցինք ավելի խորքային գտելիքներ, որոնք, վստահաբար, կաջակցեն մեզ մեր հետագա մանկավարժական գործունեության ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով հետազոտության ընթացքում կատարած պնդումների վրա՝ հանդես գամ իմ ընդհանրացնող դիտարկումներով.

· Ուսուցիչը շատ կարևոր դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողների ծնողների հետ կառուցողական ու բարենպաստ հարաբերություններ հաստատելու առումով:

· Ընտանիքի և դպրոցի փոխգործունեության ձևերը հնարավորություն են տալիս կողմերին առողջ բանակցային հարաբերություններ ստեղծել՝ ունենալով ընդհանուր նպատակներ ու մղումներ:

· Ուսուցիչի սերտ համագործակցությունը սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ կարող է լուծել կրթական մի շարք հիմնախնդիրներ:

· Ուսուցիչը սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների համար պետք է ապահովի մանկավարժական խորհրդատվություն:

· Ուսուցիչն ու ծնողը պարտավոր են միմյանց տեղյակ պահել սովորողի խնդիրների մասին ու համատեղ փորձեն ելքեր գտնել:

· Ուսուցիչն ու սովորողի ծնողը պետք է փոխադարձաբար հարգեն միմյանց՝ հաշվի նստելով քաղաքավարության կանոնների ու էթիկայի նորմերի հետ:

· Ուսուցիչը պետք է իրականացնի ծնողական ժողովներ՝ նպատակ ունենալով քննարկել առկա խնդիրները:

· Կարծում եմ, որ այս հարաբերություններում շատ կարևոր են մարդկային որակները, ուստի երկուստեք հարկավոր է լինել հանդուրժող և արդարամիտ:

Հաշվի առնելով նոր ժամանակների մարտահրավերները, կրթական համակարգի պահանջներն ու սովորողների՝ ամենօրյա ռեժիմով փոփոխվող հետաքրքրություններն ու պահանջմունքները՝ կարծում եմ, որ ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է հնարավորություն ստանա էլ ավելի շատ տեղեկություններ

ունենալու այն մասին, թե ինչով է զբաղվում իր երեխան դպրոցում, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ, ինչ հետաքրքրություններ ու նախասիրություններ ունի: Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում. նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ: Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց – ընտանիք համագործակցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ.Դ Ուշինսկու մանկավարժական հայացքները

2. Քայլ առ քայլ»-ի չափորոշիչների կիրառումը դասարանում

3. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=119102 ՀՀ ընտանեկան օրենսգիրք:

5. https://escs.am/files/files/2021-02- 08/c23df9485819d1e8030dcca275ff2d7d.pdf Ա. Պետրոսյան, «Դասղեկի աշխատանքի կազմակերպումը դպրոցում»:

6. Վ.Դ. Սեմյոնով/ Մանկավարժություն